

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն ______ Լ.Հովհաննի

«31» ----- օգոստոսի ----- 2023

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևանի Վիլյամ Սարոյանի անվան թիվ 138 հիմն.դպրոց

IVբ

Սիմոնյան Թեհմինե

դասղեկի ազգանունը, անունը

2023-2024 *ուստարի*

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2023-2024 ուստարին 4բ դասարանը սկսել է 23 աշակերտով՝ 10 աղջիկ և 13 տղա։Դասարանը շատ համերաշխ է, կազմակերպված,աշակերտները հարգանքով են վերաբերվում ուսուցիչներին և միմյանց։Դասարանն ունի ստեղծագործական կարողություններով օժտված բազմաթիվ աշակերտներ։

Աշակերտներից ինն ունեն զերազանց առաջադիմություն ,անհատական աշխատանք է կատարվել ցածր առաջադիմությամբ աշակերտների հետ։

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները
ա/մտավոր ներուժը զարգացնող որոնողական աշխատանքներ
բ/ մտավոր աշխատանքի կուլտուրայի բարձրացում
գ/կոնֆլիկտների հաղթահարմանը նվիրված դասընթացներ
դ/աշակերտների ուշադրությունը,կողմնորոշվելու կարողությունը և նրբանկատությունը զարգացնող խաղեր,միջոցառումներ

Հայեցի դաստիարակություն
- Հոգևոր դաստիարակություն---
Այն աշակերտների մեջ զարգացնում է սեր և հավատարմություն,ազնվություն,լավատեսություն,հայրենիքը ազատ տեսնելու և սեփական զավակներին հայեցի դաստիարակելու ձգտումը։Աշակերտների հոգևոր դաստիարակությունը նպատակաուղղել ձևավորելու բարոյական սկզբունքներ՝ազնվություն,ծնողասիրություն,հարգանք։Այդ նպատակով կազմակերպել էքսկուրսիա մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ,սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ։

- Գեղագիտական դաստիարակություն
Այս դաստիարակությունն օգնում է աշակերտներին ճիշտ ընկալելու գեղեցիկը ամենօրյա կյանքում,զարգացնում է անհաշտ վերաբերմունք վատ երևույթների , քաղքենիության , տգեղ արարքների հանդեպ։Կազմակերպել լավագույն նկարի ,ասմունքի մրցանակաբաշխություն։ Ֆիլմեր դիտել ,ունկնդրել երաժշտություն,զրուցել արվեստի մասին։

- Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Այս դաստիարակությունն աշակերտների մեջ արթնացնում է հայրենասիրական զգացում,զարգացնում է հետաքրքրություն մեր հայրենիքի հերոսական անցյալի նկատմամբ:Զրույցների ընթացքում կոնկրետ օրինակների հիման վրա բացահայտել հայրենիքի ազատության համար մարտնչող մարտիկների սխրանքների վեհությունը:

- Ֆիզիկական դաստիարակություն

Հետևել ֆիզկուլտուրայի դասերին աշակերտներին պարտադիր և ակտիվ մասնակցությանը,նրանց ընդգրկել սպորտային խմբերում, մասնակցել ներդպրոցական և արտադպրոցական սպորտային մրցույթներին:Երեխաներին առաջնորդել «առողջ ապրելակերպ» կարգախոսով:

- Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների հետ հաճախակի զրույցներ անցկացնել տարբեր մասնագիտությունների մասին,աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունք դաստիարակել: Մասնակցել դպրոցական ,քաղաքային սանիտարական շաբաթօրյակներին:

- Բնապահպանական դաստիարակություն

Տարբեր զրույցների միջոցով աշակերտների մեջ արթնացնել բարի և հոգատար վերաբերմունք բնության հանդեպ:Այդպիսի բնապահպանական թեմաներից են.« Բնության ռացիոնալ և խելացի օգտագործում», «Բնությունն առանց թափոնների»,«Պահպանենք բնության հարստությունները» բնապահպանական թեմաներով:Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ:

- Դպրոց-ընտանիք կապ

Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը:Ամրապնդել այս կապը՝ օգտագործելով ծնողական ակտիվի ուժերը, հաղթահարել դասապատրաստման ժամանակ ծագած դժվարությունները,
դասընկերների միջև ծագած վեճերն ու անհամաձայնությունները: Անընդհատ լինել կապի մեջ ծնողների հետ ,տեղեկացնել կատարվող զրույցների մասին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս/շ	*Ուս. աշխատանքի բովանդակությունը*	*Կատարման ժամկետը*	*Կատարող*
I	<<Բարև դպրոց>> նոր ուստարվա,գիտելիքի,նոր պարտականությունների և կարգուկանոնի մասին զրույց	01.09.23թ	Դասղեկ աշակերտ
II	<< Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները դպրոցում>>	08.09.23թ	Դասղեկ աշակերտ
III	ՀՀ անկախության անցած ճանապարհը,պետականության խորհրդանիշները	15.09.23թ	Դասղեկ,զինղեկ
IV	<<Քանի լեզու գիտես այնքան մարդ ես >> թեմայով զրույց: Զնավորել բազմակարծություն և աշխարհահայացք	22.09.23թ	Դասղեկ աշակերտ
V	<<Եթե ես լինեի …>> թեմայով քննարկում: Նպատակն է վեր հանել կարողությունները և հմտությունները:	29.09.23թ	Դասղեկ աշակերտ
VI	<<Տոնդ շնորհավոր, ուսուցի՛չ>> զրույց աշակերտների հետ:	06.10.23թ	Դասղեկ աշակերտ
VII	Զրույց<< Վարդագույն քաղաք՝ Երևան>>	13.10.23թ	Դասղեկ աշակերտ
VIII	Այցելություն Ա. Խաչատրյանի թանգարան	20.10.23թ	Դասղեկ աշակերտ
IX	<< Պոլիեթիլենի տոպրակներն ու պլաստիկ շշերը>>: Տարանջատել վնասակար աղբը	03.11.23թ	Դասղեկ աշակերտ

	Բնության հետ համերաշխ.շրջակա միջավայրի դերը ,այն աղտոտումից զերծ պահելու կարևորությունը		
X	Ապրենք խաղաղ աշխարհում.խաղաղության մշակույթի ձևավորմանն ուղղված համամարդկային արժեքների մասին	10.11.23թ	Դասղեկ աշակերտ
XI	Ժամանակի ճիշտ կառավարում.առաջնային և երկրորդային գործողությունների դասակարգում,ժամանակի ճիշտ պլանավորում և կառավարում	17.11.23թ	Դասղեկ աշակերտ
XII	<< Գնահատիր ինքդ քեզ >> նպատակն է արժևորել արժե համակարգ ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլուծություն:	24.11.23թ	Դասղեկ աշակերտ
XIII	Լավ և վատ արաքներ:Սերմանել սիրո,հարգանքի զգացում շրջապատի,դպրոցի,ուսուցչի հանդեպ	01.12.23թ	Դասղեկ աշակերտ
XIV	Բնական աղետների վտանգների կախարգելում.ինչպես պաշտպանվել երկրաշարժից առաջին րոպեներին	08.12.23թ	Դասղեկ, բուժքույր
XV	Բարեկիրթ վարքի կանոնների ծանոթացում	15.12.23թ	Դասղեկ աշակերտ
XVI	Ամանորին ընդառաջ: Ամանորյա լույսեր:	22.12.23թ	Դասղեկ աշակերտ
XVII	Հայտնի մարդկանց կյանքի պատմություններ	12.01.24թ	Դասղեկ աշակերտ
XVIII	<< Կարող եմ օգտակար լինել >> թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարին և դրական հատկանիշները:	19.01.24թ	Դասղեկ աշակերտ
XIX	Բանակի օր.բանակի դերը երկրի պետականության ձևավորման գործում	26.01.24թ	Դասղեկ , զինղեկ

XX	Ազգային տոներ. դրանց դաստիարակչական նշանակությունը,հայերի մշակույթը ՀՀ-ում	02.02.24թ	Դասղեկ , աշակերտ
XXI	Մարդու իրավունքների պաշտպանություն(երեխաների պաշտպանությունը չարաշահումից և բռնությունից)	09.02.24թ	Դասղեկ,աշակերտ
XXII	Ինչպես ապացուցել քո ճշմարտացիությունը.սովորել խոսել միայն ճիշտ փաստերով,առողջ բանավիճել,ապացուցել սեփական ճշմարտացիությունը, ընդունել դիմացինի կարծիքը	16.02.24թ	Դասղեկ,աշակերտ
XXIII	Թումանյանական շաբաթ: Մեծ բանաստեղծի 155ամյակի նվիրված այցելություն Հովհաննես Թումանյանի թանգարան :	23.02.24թ	Դասղեկ, կազմակերպիչ
XXIV	<<Ես էլ քեզ նման ...>>ինչպես ձևավորել ինքնահարգանք,հարգանք դիմացինի նկատմամբ,դրսևորել անձերի համեմատություն և հավասարություն	01.03.24թ	Դասղեկ,աշակերտ
XXV	Զրույց <<Իմ հիգիենան>> խորագրով	15.03.24թ	Դասղեկ,աշակերտ
XXVI	«Կանաչ տարածքների նշանակությունը». Ծառատունկի կարևորությունը Երկիր մոլորակի պաշարները հավերժ չեն, շրջակա միջավայրի վիճակի բարելավումը որքանով է կախված մեզանից	22.03.24թ	Դասղեկ,աշակերտ

XXVII	Պատասխանատվություն .ինչի կարող է հանգեցնել դրա բացակայությունը	05.03.24թ	Դասղեկ ,կազմակերպի
XXVIII	Ապահով համացանց.զերծ մնալ վտանգավոր խաղերից	12.04.24թ	Դասղեկ,աշակերտ
XXIX	<< Աշխատակից ենք ընտրում >> սովորողները կհասկանան՝ թեև տարբեր մասնագիտություններ պահանջում են տարբեր կարողություններ և որակներ , այնուամենայնիվ կան որակներ և կարողություններ , որ կարևոր են բոլոր մասնագիտությունները:	19.04.24թ	Դասղեկ, կազմակերպի
XXX	<< Հայոց Մեծ եղեռն >> էքսկուրսիա դեպի Ծիծեռնակաբերդ:	26.04.24թ	Դասղեկ,աշակերտ
XXXI	<< Ես պետք է օգնեմ >> …..: Աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքավոր մարդկանց նկատմամբ:	03.04.24թ	Դասղեկ,աշակերտ
XXXII	Կոնֆլիկտային իրավիճակներում դրսևորվող վարք. կոնֆլիկտների լուծման հնարավոր ելքեր:	10.05.24թ	Դասղեկ, կազմակերպի
XXXIII	Իմ երկիրը երեկ ,այսօր ,վաղը:Ազգային ազատագրական պայքարի դերը ժողովրդի ինքնորոշման գործում:	17.05.24թ	Դասղեկ, զինղեկ
XXXIV	<<Լինել առողջ և ուժեղ>>:Ձևավորել առողջ ապրելակերպ,սովորողները ինքնուրույն կպարզեն `ինչպես ճիշտ և օգտակար սնվեն:	24.05.24թ	Դասղեկ,աշակերտ

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման /ա/տ	*Միջոցառման բովանդակությունը*	*Ծանոթություն*

8.09.23թ	<< Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները դպրոցում>>	Զրույց դասարանի աշակերտների հետ
2.09.23թ	ՀՀ անկախության անցած ճանապարհը,պետականության խորհրդանիշները	Զրույց <<Ազատ,անկախ Հայաստան>> թեմայով
0.09.23	Այցելություն Ա. Խաչատրյանի թանգարան	
0.11.23թ	Ապրենք խաղաղ աշխարհում	խաղաղության մշակույթի ձևավորմանն ուղղված համամարդկային արժեքների մասին
5.12.23թ	Բարեկիրթ վարքի կանոնների ծանոթացում	Զրույց բարեկրթության կանոնների և դրանց կիրառության մասին առօրյա կյանքում
3.02.23թ	Այցելություն Հովհաննես Թումանյանի թանգարան :	Մեծ բանաստեղծի 155ամյակի նվիրված Թումանյական շաբաթ:
2.03.23թ	Կանաչ տարածքների նշանակությունը». Ծառատունկի կարևորությունը	Երկիր մոլորակի պաշարները հավերժ չեն, շրջակա միջավայրի վիճակի բարելավումը որքանով է կախված մեզանից-զրույց
6.04.23թ	<< Հայոց Մեծ եղեռն >>	Էքսկուրսիա դեպի Ծիծեռնակաբերդ
0.05.23թ	Կոնֆլիկտային իրավիճակներում դրսևորվող վարք	Կոնֆլիկտների լուծման հնարավոր ելքեր:
4.05.23թ	<<Լինել առողջ և ուժեղ>>	Ձևավորել առողջ ապրելակերպ,սովորողները ինքնուրույն կպարզեն՝ինչպես ճիշտ և օգտակար սնվեն: